ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/, աշխատակազմի առաջին կարգի մասնագետի/ծածկագիր 3.2-1/ և աշխատակազմի առաջին կարգի մասնագետի/ծածկագիր 3.2-2/ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար

13.08.2014թ.
ՏԻՊ՝ համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ Մարգարայի գյուղապետարան
Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. Մարգարա համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1/

Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, ընդունում է որոշումներ: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության երկրորդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող պետական ծառայության դասային աստիճան/կոչում/ կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ մինչև 2015 թվականի հունվարի մեկը համայնքային ծառայության պետական և /կամ/ համայնքային կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված, իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:
- Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքի գյուղապետարանի առաջին կարգի մասնագետ / ծածկագիր 3.2.-1/
   Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները ներկայացնում է համայնքի ազգաբնակչությանը հարկային տեղեկատվությունները:

- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն,
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

3. ՀՀ Արմավիրի մարզի Մարգարա համայնքի գյուղապետարանի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2.-2/
   Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝

- մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքային, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար
- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորությունները,
- ունի համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներվ աշխատելու ունակություն,
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթախմբում նշված լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթները կկայանան 2014 թվականի սեպտեմբերի 15-ին ժամը 12.00-ին, 14.00-ին, 16.00-ին, Մարգարայի գյուղապետարանի շենքում:
Մրցույթներին դիմող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ, ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթ:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր 10.00-ից մինչև 16.00, բացի շաբաթ և կիրակի օրերից Մարգարայի գյուղապետարանում /հեռ. 055-03-53-53/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237/2-76-49, 2-07-70/:
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները ներկայացվող փաստաթղթերի ցանկին և այլ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մարգարայի գյուղապետարանի աշխատակազմ:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 29.08.2014թ.: